



Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի
օգնականների դասավանդման հմտությունների զարգացման
ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Աբովյանի 8 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Առարկա՝ Պատմություն
Թեմա՝ Հյուսիս-արևելյան Հայաստանի հաճարենու
անտառներ

Վերապատրաստող, մենթոր՝ Ն.Մելիքսեթյան
Ուսուցիչ՝ Ռ.Թամրազյան

Նախաբան

1. Նախաբան	3
2. Հյուսիս-արևելյան Հայաստանի հաճարենու անտառների արդի վիճակը. 6 3Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հաճարենու անտառների բնական վերարտադրության առանձնահատկությունները	11
3. ՀՀ հյուսիս-արևելյան շրջանների հաճարենու անտառների բարելավման ուղիները, անտառվերականգնումն ու դրան նպատակաուղղված միջոցառումները	15
4. Ամփոփում	21
5. Օգտագործված գրականություն	24

Նախաբան

Անտառը ծառաթփային բուսականության գերակշռությամբ կենսաբանական բազմազանության ամբողջություն է: Անտառում գլխավոր դերը պատկանում է ծառերին ու թփերին, իսկ երկրորդականը՝ խոտաբույսերին, թփուտներին, մամուռներին, քարաքոսերին և այլն: Միատեսակ ծառերից, օրինակ՝ հաճարենուց, կազմված անտառները կոչվում են մաքուր անտառ, տարբեր տեսակներից, օրինակ՝ կաղնուց և հաճարենուց, կազմվածները՝ խառնանտառ: Անտառի կառուցվածքը պայմանավորված է ծառերի բարձրությամբ, շարահարկայնությամբ, խորությամբ, ծառաթփային տեսակաշարով: Անտառի ծառատեսակները լինում են գլխավոր և երկրորդական:

Գլխավոր կամ անտառկազմող ծառատեսակներն անտառային համակեցության գերիշխող, դիմացկուն, ամենախոշոր ծառերն են, որոնք առաջացնում են առաջին շարահարկը, զբաղեցնում են մեծ տարածք և ապահովում են անտառի բարձրությունն ու կայունությունը: 1-ին շառղովրդական տնտեսության համար փայտանյութի հիմնական աղբյուր են [1]: Երկրորդական կամ ուղեկցող ծառատեսակները ստվերասեր և խոնավասեր են, առաջացնում են երկրորդ շարահարկը, նպաստում են գլխավոր տեսակների աճմանն ու զարգացմանը, ապահովում վերին շարահարկի բավարար խտությունը, ստվերում պահում հողը՝ նվազեցնելով գոլորշիացումը:

Կլիմայական տարբեր գոտիներում ձևավորվում են տարբեր տիպերի անտառներ: Անտառը ծառերի տիրապետությամբ բուսական և կենդանական օրգանիզմների համակեցություն է՝ իր գոյությամբ պայմանավորված աճման որոշակի պայմաններով: Զարգացման ընթացքում նրա բաղադրիչ մասերը մշտապես փոխկապակցված են և փոխազդեցության մեջ են ինչպես մեկը մյուսի, այնպես էլ շրջապատող միջավայրի հետ: Հայկական լեռնաշխարհն ունի հարուստ և բազմազան բուսականություն, սակայն Հայաստանը համարվում է անտառներից աղքատ պետություն, երկրագնդի

անտառագուրկ շրջաններից մեկը և բնակչության մեկ շնչին ընկնող անտառային տարածությամբ աշխարհում գրավում է ամենավերջին տեղերից մեկը [1]:

ՀՀ-ում անտառները կազմում են տարածքի 10-12,7%-ը:

Առավել անտառածածկ են ՀՀ հյուսիս-արևելյան մարզերը, որտեղ բուսականության հիմնական տիպը հաճարենու անտառներն են՝ արևելյան հաճարենու գերակշռությամբ: Ենթալայան անտառային գոտում տարածված են հաճարենու խոնավ անտառները, որոնց ներսում և եզրերին լայնորեն տարածված են կաղնու մաքուր և խառը ծառուտները, տեղ-տեղ հանդիպում են սոճու անտառների ոչ մեծ տեղամասեր:

Ավելի վերին գոտում (1000-1500 մ) գերակշռում են հաճարենին, իսկ դրանից ցած՝ կաղնին և բոխին՝ կնձենիների և հացենիների խառնուրդով:

ՀՀ հաճարենու անտառների նշանակությունը չափազանց մեծ է ոչ միայն մեր պլետության, այլ նաև տարածաշրջանի համար, ունի հողապաշտպան, դաշտապաշտպան, ջրապաշտպան, ջրակարգավորիչ, կլիմայակարգավորիչ նշանակություն: Հաճարենու անտառներն օդը հարստացնում են թթվածնով, բարձրացնում օդի հարաբերական խոնավությունը, բարերար ազդեցություն թողնում շրջակա դաշտերի բերքատվության և մարդու առողջության վրա: Անտառային էկոհամակարգերը մեր համար կատարում են նրա «թոքերի» ֆունկցիան: Անտառը կենսոլորտի հավասարակշռության կարևորագույն գործոնն է, թթվածնի աղբյուրներից մեկը, արեգակնային էներգիայի ու կենսազանգվածի կուտակիչը: Անտառները կարգավորում են գետերում ջրի մակարդակը, թուլացնում են են քամու արագությունը, պահպանում օգտակար կլիման [3]:

Անտառածածկը մաքրում է գետնամերձ մթնոլորտը, կանոնավորում ջերմաստիճանային ռեժիմը և ջրերի հոսքը, հողը պաշտպանում էրոզիայից ու մարդկանց համար սննդի, բազմազան հումքի աղբյուր է հանդիսանում: 1 հա անտառապատ տարածքը կարող է արտադրել այնքան թթվածին, որքան անհրաժեշտ է 200 մարդու 1 ժամ շնչառության համար: Անտառը բարերար ազդեցություն է թողնում մարդու առողջության վրա: Այն աղմուկի նվազեցման, օդի մաքրության, հանգստի համար կազմակերպման լավագույն միջոց է: Հենց անտառն է շրջակա միջավայրը մաքրում և պաշտպանում փոշուց: 1հա անտառը կարող է 1 տարվա մեջ օդը մաքրել 5070 տ. փոշուց: Անտառը միայն փայտանյութի և քիմիական արտադրության համար հումքի աղբյուր չէ, այն նաև թթվածնի աղբյուր է, միջավայր՝ մսի, ճարպի և մորթու արտադրության [2]: Ըստ նշանակության՝ անտառները դասակարգվում են.

1. պաշտպանական (ջրային օբյեկտների ջրապահպան գոտիների, բարձր թեքության վրա գտնվող, կիսաանապատային, տափաստանային, անտառատափաստանային
2. գոտիներում աճող, բուսաբանական այգիների, դենդրոպարկերի շրջակայքի անտառները), հատուկ (բնության հատուկ պահպանվող տարածքներում ընդգրկված, քաղաքային ու քաղաքամերձ, ռեկրեացիոն-առողջարարական, գիտական արժեք ներկայացնող, սանիտարական գոտիները պահպանող անտառներ),
3. արտադրական

Հաճարենին կասկենին և կաղնին պատկանում են հաճարազգիների ընտանիքին: Հաճարենի անտառայինը տարածված է Հարավային Եվրոպայից մինչև Սկանդինավիա և Մեծ Բրիտանիայից Մոլդովա, Ուկրաինա և Սանկտ Պետերբուրգ ընկած բնական անտառներում: Հազարամյակների ընթացքում այն զգալի նվազել է, սակայն նույնիսկ մեր օրերում կազմում է Եվրոպական անտառների մոտ 20-25 %: Եվրոպացիները դեռևս նոր ժամանակների սկզբում հասկացել են հաճարենու անտառի բնապահպանական անգնահատելի արժեքը: Եվրոպական քրիստոնեական մշակույթում հաճարենին խորհրդանշում է անսահման կամք և ուժ, հաղթանակ, ազգի շարունակություն և համախմբում, կենսունակություն: Գերմանիայում հաճարենին հայրենիքի, ազգի պատմական մշակութային ժառանգության խորհրդանիշ է: Մերբերը համարում են, որ տարեց հաճարենին հատողը կհիվանդանա և այլևս չի բուժվի:

ՀՀ բնական պայմաններում հաճարենին հանդիպում է Տավուշի, Լոռու, Կոտայքի մարզերի անտառների միջին և վերին լեռնային գոտիներում, ծովի մակերեւույթից 8002200 մ բարձրությունների վրա [9]:

Հաճարենու տեսակի բաշխվածությունը Հայկական ՍՍՀ-ի անտառներում (%-ով ընդհանուր տարածության նկատմամբ) 1983թ.

Տեսակը	Անտառային տարածությունը արտահայտված %-ով		
	պոտանտառֆոնդ	կոլտնտեսային	Սովխոզային և այլ հողօգտագործողների
Հաճարենի	35.4	7.6	2.5
Կաղնի	34.4	29.1	36.8
Բոխի	18.3	22.1	31.7

Տեսակներից հաճարենին, բոխին և կաղնին զբաղոցնում են շուրջ 224.4 հազար հա տարածություն կամ ամբողջ անտառների 88.0 %-ը: Առատ տեղումների և ձնհալի շրջանում հաճարենու արմատային համակարգը կլանում է ջրերը, որոնք ստորգետնյա հուներով հոսում են դեպի ջրային ավազաններ: Այսպիսով հաճարենին նպաստում է ոչ միայն օդի, այլև ջրի մաքրությանը: Այն ունի նաև անտառատնտեսական, հողապաշտպան նշանակություն: Հաճարենու բնափայտը, կեղևը, բողբոջը, տերևը, պտուղը և սերմը ունեն լավ ուսումնասիրված բավականին հագեցած քիմիական բաղադրություն: Խարկած սերմերը ուտելի են, դրանց մեջ պարունակվում է մինչև 3 % թրթնջկաթթու, ֆենոլակարբոնային թթուներ: Կեղևից ստացված ցերատինի թթուն կիրառում են ինսուլտի դեպքում: Պտուղներից ստանում են արժեքավոր կիսաչորացող յուղ: Չորացրած սերմից և յուղի արտադրությունից հետո առաջացած քուսպից ստանում են սուրճին փոխարինող հումք: Կովկասի և Կարպատների ժողովուրդները փոշիացրած սերմից հաց են պատրաստում: Հաճարենուց ստացված փայտանյութը ամուր է, մպինդ, ծանր, հեշտությամբ հղկվում է, պատրաստում են ատաղծագործական իրեր, շպալներ[8]

Ես իմ աշխատանքում կփորձեմ ներկայացնել ՀՀ հյուսիս-արևելյան շրջանների անտառների և հատկապես հաճարենի ծառատեսակի վիճակը անցյալում և հիմա, նրա պահպանման դժվարությունները և դրա հետ կապված խնդիրները, հաճարենու անտառի կարևոր նշանակությունը շրջակա միջավայրի, մարդկանց և պետության համար; ՀՀ ահտառները միայն կանաչապատ տարածք չեն, դրանք ազգային արժեք են, երկրի գեղեցկությունն ու հմայիչ տեսքը, էկոտուրնժիզմի և զբոսաշրջության զարգացման գրավականներից մեկը:

Գլուխ առաջին

Հյուսիս-արևելյան Հայաստանի հաճարենու անտառների արդի վիճակը:

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիսարևելյան հատվածում: Ընդգրկում է Իջևանի, Տավուշի (նախկինում՝ Շամշադին), Նոյեմբերյանի տարածաշրջանները և 4 քաղաքներ՝ Իջևանը, Նոյեմբերյանը, Բերդը և Դիլիջանը: Մարզը սահմանակից է Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին:

Մարզի բնությունը գեղատեսիլ է: Ընդհանուր մակերեսի 51%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, բնական ժառանգության անզուգական հուշարձաններով: Տարածքի հողային ծածկույթը ներկայացված է հիմնականում անտառային դարչնագույն հողերով, ընդ որում գետահովտային մասում տարածված են մարգագետնացված հողեր, իսկ թփուտների տարածքներում՝ տափաստանացված հողեր: Այդ հողերի վրա աճում է անտառային բուսականություն, որի հիմնական և գերակշռող տիպը հաճարենու և կաղնու անտառներն են՝ այլ ծառատեսակների ոչ մեծ խառնուրդով:

Ռեկրեացիոն տեսանկյունից շատ մեծ է հաճարենու անտառների դերը, որոնք

մեղմացնում են կլիմայական պայմանները՝ ստեղծելով բարենպաստ միկրոկլիմայական պայմաններ կլիմայաբուժության համար:

ՀՀ հյուսիս-արևելքում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 6002000մ բարձրությունների վրա: Միջին լեռնային գոտում 1000-1700մ հյուսիսային կողմի լանջերը հիմնականում զբաղեցնում են հաճարկուտները, հարավային լանջերը կաղնու համակեցությունները: Հաճարկուտներում անտառի կազմի մեջ մտնում են բոխին, կաղնին, լորին, հացենին: Այստեղ կենդանական աշխարհի բազմազանությանն ու հարստությանը նպաստում է լեռնային խիստ կտրտված ռելիեֆը, բնական քարանձավների առկայությունը, խիտ անըհառները, ջրերի առատություն: Տավուշի անտառներում հանդիպում են ավելի քան 500 տեսակի բուսական և կենդանական ծագում ունեցող կողմնարդյունքի պաշարներ, նույն թվում 156 տեսակի դեղաբույսեր, 22 տեսակի ուտելի խոտաբույս, 84 տեսակի թփատեսակներ, մոտ 20 տեսակի ուտելի սնկեր:

Հյուսիս-արևելքի անտառների դերը մեծ է հողապաշտպան, ջրապաշտպան ջրակարգավորիչ ֆունկցիաներում; Հայաստանի նման լեռնային երկրում հողի պաշտպանության ու երոզիայի կանխարգելակումը ավելի մեծ նշանակություն ունի, քան բնափայտի արտադրությունը: Լանջի թեքությունների վրա հատված անտառներում խստիվ արգելվում է կոճղերի հեռացումը, որովհետև վերջինիս արմատային ցանցը կանխում է հողատարումը: Տավուշի մարզի երկաթուղու և ավտոճանապարհի երկյանքով ձգվող ճանապարհները վտանգավոր կլիմայական երևույթներից՝ քամի, ձյուն, հողի երոզիա, արևի ճառագայթներ; Հյուսիս-արևելյան անտառներում կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության ներկա վիճակը տագնապալի է, որին մեծապես նպաստել է անտառների անսխստեմ շահագործումը՝ ինտենսիվ հատումների, գերարածեցման, խոտհնձի և այլ նպատակներով; Անտառահատումների ինտենսիվության արդյունքում ակտիվանում են սելավային և սողանքային երևույթները; Հաճախ անասունների արածեցումը ընդգրկում է անտառֆոնդի մեծ մասը, վնասելով մատղաշը : Հայաստանը ԽՍՀՄ փլուզումից հետո կանգնեց բազում խնդիրների առջև՝ սոցիալական, տնտեսական, քաղաքական: Շարունակական բնույթ կրող բախումները հարևան Ադրբեջանի հետ, ինչպես նաև թուրք-ադրբեջանական բլոկադան վերջիվերջո հանգեցրին նաև էներգետիկ ճգնաժամի, ինչի արդյունքում գազի և էլեկտրականության բացակայության պատճառով մարդիկ սկսեցին ծառերն օգտագործել որպես վառելիք: Լայնածավալ բնույթ սկսեցին կրել ապօրինի ծառահատումները: Համաձայն 2005թ-ի Միջազգային անտառաբուծության տեսության ՀՀ-ում միայն 1991-1996թ.թ. ընթացքում տարեկան 600.000 կուբամետր ծառ է կտրվել: Ծառահատումները չեն դադարել նաև հաջորդող տարիներին, ինչի մասին վկայում է այն ցուցանիշը, որը գրանցվել է 2005 թին: Այդ ցուցանիշը կազմում է ՀՀ տարածքի 10%-ը 1988թ-ի 11.2% ցուցանիշի դիմաց: Սակայն ինչպիսի՞ն է իրավիճակն այսօր: Արդյոք հիմա, երբ չկա էներգետիկ ճգնաժամ, իսկ տնտեսության ոլորտում, համաձայն ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տվյալների, միայն 2005թ. 6 ամիսների ընթացքում 10.2% տնտեսական աճ է գրանցվել, շարունակվո՞ւմ են ապօրինի անտառահատումները այսօր, թե՞ ոչ: Այսպես, համաձայն «Հայաստան ծառ նախաձեռնության» (Armenia Tree Project) կայքէջում տեղադրված տվյալների, ցուցանիշները հետևյալն են: Այսօր ՀՀ տարածքում տարեկան

մոտ 750,000 կուրամետր ծառ է կտրվում: Մա, ըստ փորձագետների, կհանգեցնի նրան, որ 50 տարի անց Հայաստանը կլինի անապատացված տարածաշրջան: Հետազոտությունների համաձայն՝ տարեկան կես միլիոն կուրամետր փայտ է այրվում Հայաստանում, որից միայն 10-12%-ն է արձանագրվում: Մարդկանց ապօրինի գործողությունների արդյունքում ոչ միայն կրճատվել են Հայաստանի անտառների տարածքները, այլև դա հանգեցրել է ծառատեսակների կառուցվածքային փոփոխության: Այսպես, նվազում են այնպիսի օգտակար ծառատեսակները, ինչպիսիք են հաճարենին, կաղնին, սոճին և հացենին, իսկ դրանց տեղը հայտնվում են պակաս օգտակար տարատեսակները /օրինակ ֆենիելները/: Անտառածածկ տարածքների վրա մարդածին բացասական գործոնի հետևանքով ավելի ինտենսիվ է ընթանում անցանկալի տեսակափոխություն, որի արդյունքում տնտեսապես արժեքավոր ծառատեսակները փոխարինվում են համեմատաբար ցածրարժեք տեսակներով:

Համաձայն «Հայաստան ծառ նախաձեռնության» (United Nations Common Country Assessment of Armenia) մեկ այլ հետազոտության արդյունքների՝ սկսած 1993 թ-ից ավելի քան 100.000 հեկտար անտառ է հատվել Հայաստանի ողջ տարածքով մեկ, ինչի արդյունքում այսօր Հայաստանի Հանրապետության 240.000 հեկտարն է անտառածածկ, որը համապատասխանում է ողջ տարածքի 8%-ին: Անապատացման խիստ մեծ վտանգ սպառնում է երկրի 26.8%-ին, իսկ անապատացման ավելի մեղմ, բայց, այնուամենայնիվ, հնարավոր վտանգ սպառնում է պետության տարածքի 8.8%-ին:

Անապատացմամբ է պայմանավորված բնակավայրերի տարեցտարի դառնող չորությունը: Անապատացման հիմնական չափանիշներն են խոնավության գործակցի նվազման միկտումը, օդի և հողի ջերմաստիճանային օրական տատանումների մեծացումը, գոլորշունակության մեծացումը, տեղումների քանակի նվազումը, հողագոյացման բնույթի փոփոխությունը, կենսաբազմազանության նվազումը, գետերի հոսքերի նվազումը, սելավների և երոզիայի աճը և այլն:

Իսկ ինչպիսին են պաշտոնական տվյալները և, ընդհանրապես, պետության դիրքորոշումը տվյալ խնդրի շուրջ: Նախ նշենք, որ համաձայն պաշտոնական տվյալների՝ Հայաստանում անտառածածկ տարածքները կազմում են 334.100 հա, այսինքն՝ ՀՀ ամբողջ տարածքի 11-12%: Սակայն անհրաժեշտ է նշել, որ այս տվյալները գրանցվել էին դեռևս

1992թ-ին: Միևնույն ժամանակ վերը նշված հետազոտությունների համաձայն այսօր անտառածածկ տարածքները կազմում են 8%:

Վերջին տարիներին Հայաստանում աննախադեպ չափերի է հասել բնության ավերումը և բնական ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը: Բացվում են նոր հանքավայրեր, չեն դադարում «օրինական» ապօրինի անտառահատումները, հողերի աղտոտումը հասնում է աղետալի չափերի, ջրային ավազանը «հարստանում է» տարբեր աղտոտիչներով այլն: Հայաստանում իշխանությունները չեն համաձայնում՝ անտառահատումները պատճառաբանելով, որ դա ծանր բեռ կլինի անտառածածկ տարածքներում ապրող սոցիալապես անապահով բնակչության համար, որոնք հույս ունեն անտառների հաշվին վառելիք ստանալ և աշխատանք ունենալ: Այս խնդրին առաջարկում է օրինակ 5 տարի ոչ մի տեսակի հատումներ չիրականացնել, արգելել անտառահատումները, իսկ անտառամերձ տարածքների համար իջեցնել գազի գինը:

Երրորդ գործողությունը, որով նախատեսվում է կանխարգելել անօրինական հատումները, անտառի պահապանների աշխատանքային պայմանների բարելավմանն է ուղղված: Այս պահին անտառապահների աշխատավարձը չի հասնում 50.000 դրամի, նրանց չի տրամադրվում զենք, ավտոմեքենա կամ ձի, արտահագուստ, որոնք անհրաժեշտ են հսկայական տարածքները հսկելու համար, անտառապահներից յուրաքանչյուր երրորդը դատվածություն ունի հենց նույն անտառային գործերի հետ կապված ու այսօր շատերն այդ պատճառով չեն ուզում անտառապահ դառնալ: Հայաստանի անտառային տարածքները պահպանելու համար, համաձայն անտառաշինական նախագծերի, ստեղծված են 85 անտառտնտեսություններ և 516 պահաբաժիններ, որոնք ի պահ են տրված նույնքան անտառապետերի և անտառապահների: Միջին հաշվով, յուրաքանչյուր անտառապահ հսկում է միջին հաշվով շուրջ 670 հա անտառային տարածք: Իրականացված հետազոտությունները (Տավուշում և Լոռիում) ցույց են տվել, որ փայտանյութը օգտագործվում է ոչ միայն այնտեղ, որտեղ գազ չկա, այլև այնտեղ, որտեղ կա, իսկ գազի թանկացմանը զուգահեռ զգալիորեն նվազել են գազի օգտագործման ծավալները որպես վառելիք: Գազը օգտագործվում է հրատապ անհրաժեշտության դեպքում կամ, օրինակ, ինչ-որ սենյակ տաքացնելիս: Գազին զուգահեռ օգտագործվում է փայտանյութը: Ուստի այս դեպքում հարկ է հեռավոր

անտառամերձ գյուղերի բնակիչների համար գազն ավելի մատչելի դարձնելը ոչ միայն բառի բուն իմաստով, այլև գնային առումով: 2010 թ.-ի հետ համեմատած, զգալիորեն կրճատվել են գազի սպառման ծավալները: Հատկապես գյուղական բնակավայրերի շատ բնակիչներ այս ձևեր իրենց գազի վառարանները փոխարինել էին փայտի վառարաններով: Սակայն անտառը ավելի հաճախ հատվում է բիզնեսի նպատակով: Ընդ որում անտառին սպառնացող հիմնական խնդիրը ոչ թե ջեռուցման համար կատարված հատումներն են, այլ հենց բիզնես նպատակով արվածները, որովհետև հենց այս դեպքերում են, որ կտրվում են լավագույն ծառերը: Վերը նշված փաստերը և կարծիքները հաշվի առնելով՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացության: Անհրաժեշտ է լուրջ հսկողություն սահմանել ողջ անտառածածկ տարածքներում, ինչպես նաև բարձրացնել տուգանքի արժեքը յուրաքանչյուր կտրված ծառի դիմաց այնքանով, որքանով այլևս նման բիզնեսով զբաղվելը ձեռնտու չի լինի: Ըստ Անտառային օրենսգրքի՝ Հայաստանի անտառները դիտվում են որպես պաշտպանիչ շերտ հողի ու ջրի համար :ՀՀ իշխանությունը կարևորում է անտառի կայուն կառավարումը, ինչպես նաև անտառի երեք բաղադրիչների՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական հավասարակշռությունը, քանի որ դրանք փոխկապակցված են:

Գլուխ երկրորդ

Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հաճարենու անտառների բնական վերարտադրության առանձնահատկությունները:

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ Հայաստանի տարածքի 11,2%-ը (334.100 հա) անտառածածկ է: Այդ ցուցանիշը ստացվել է 1993 թ. անտառների պետական հաշվառումից, որը հենվել է 1986-1989 թթ. կատարված վերջին ուսումնասիրությունների հիման վրա : NASA-ի տվյալները մխիթարիչ չեն. հանրապետությունում շարունակվում է անտառների կրճատման միտումը: Տիեզերքից արված լուսանկարները վկայում են, որ եթե 2001թ. անտառային տարածքները կազմել են 8%, ապա 2006թ. արդեն՝ 7,9%: Անտառային տարածքների վերջնական ճշգրիտ տվյալների դժվարությունը կայանում է նրանում , որ

հատված ծառերի բները տալիս են շիվեր: Նայելով կարելի է հասկանալ, թե ինչու ոչ ոք այդ անտառը չի կտրում: Դա, այսպես կոչված, երկրորդական անտառ է՝ բարակ, ճկուն շիվեր, որոնք աճել են կոճղերի վրա: Ամեն մի կոճղի վրա այդպիսի 7-10 շիվ կա: Նրանք միահյուսված են եւ հեռվից անտառի տպավորություն են թողնում, այն էլ որ տերևներով են ծածկված: Բայց նրանք բացարձակապես անպետք են որպես վառելափայտ, առավել ևս շինափայտ օգտագործվելու համար:

Համաձայն ամերիկացի մասնագետների հետազոտությունների՝ 2030թ. Հայաստանը կարող է մնալ առանց անտառային տարածքների, ինչը կարող է հանգեցնել ջրային ռեսուրսների կրճատմանը և սողանքային գործընթացների ակտիվացմանը: Այժմ իրականացվող հատումների իրական ծավալների վերաբերյալ ճշգրիտ գնահատականներ չկան: Կա պաշտոնական վիճակագրություն, թե որքան ծառ է ապօրինի հատվում: Ըստ այդմ՝ 2011 թ. ապօրինի հատվել է 3216 ծառ, որից 2488-ը՝ «Հայաստանի» տարածքներում, 656-ը՝ բնության հատուկ պահպանվող տարածքներում, 752-ը՝ համայնքային հողերում: Հայաստանում յուրաքանչյուր հասուն մարդ կարող է հաստատել, որ իրականում ծառահատումներն ավելի լայնամասշտաբ բնույթ են կրում: Սա ցույց է տալիս, որ անտառների պահպանման ու վերահսկողության խնդիրը հեռու է բավարար լինելուց: Սա այն դեպքում, որ ստեղծվել է անտառային մոնիտորինգի կենտրոն, որին պետական բյուջեից 54 մլն դրամ են հատկացնում ապօրինի հատումները բացահայտելու, բնափայտի տեղափոխումն ու այլ բացասական գործողությունները կանխարգելելու համար: Կենտրոնը գործում է 2005 թվականից:

ՀՀ անտառային ֆոնդը 2006թ.եղել է 463.3 հզ.հա է, որից անտառածածկ է 86.7 %-(2006թ.)

ՀՀ անտառային ֆոնդը ըստ ՀՀմարզերի (2006թ.)

Ընդհանուր տարածքը (հզ.հա)		Անտառածածկ տարածքը (%)
Երևան	1.3	85.4
Արագածոտն	12.6	64.7
Արարատ	29.2	31.2

Արմավիր	0.8	16.9
Գեղարքունիք	33.7	74.5
Լոռի	98.3	93.8
Կոտայք	23.5	78.8
Շիրակ	5.2	76.1
Սյունիք	95.8	94.5
Վայոց ձոր	17.9	71.4
Տավուշ	145.0	95.4

1990թ տվյալներով ՀՀ-ան անտառային ֆոնդի մակերեսը 484.1 հազ.հա. է եղել [19]:

Հայաստանի անտառածածկ տարածքներն անցած տարիներին տուժել են տարբեր պատճառներով: Այդ պատճառները բազմաթիվ են՝ անասունների արածեցում, հրդեհներ, ապօրինի և չկարգավորված ծառահատումներ, չափազանց շոգ ամառ, ոչ հոգատար և անտարբեր մարդկային վերաբերմունքը վնասատու միջատների ազդեցություն և մի շարք կարևոր գործոններ [2]:

Երկրի անտառներին չափազանց մեծ վնաս են տալիս հրդեհները: Անտառային հրդեհները լինում են գետնատարած, երբ այրվում է խաշամը:

Վտանգավոր է սաղարթային հրդեհը, երբ խաշամի հետ այրվում է նաև ծառերի սաղարթը: Գետնամերձ հրդեհը հանգցնում են կրակի վրա հող, ավազ լցնելով, հարվածելով կտրած ճյուղերով:

Հայաստանում հրդեհները, համեմատած այլ երկրների հետ, շատ մեծ չափերի չեն հասնում: Վերջին 10 տարվա ընթացքում այրվել է 1964 հա անտառային տարածք, իսկ 2010 թ-ին 2-3 դեպք է գրանցվել:

Հարկ է նշել նաև, որ «Հայանտառն» այսօր չունի անհրաժեշտ քանակի տեխնիկական միջոցներ, սարքավորումներ և հակահրդեհային մեքենաներ: Այդ պատճառով է, որ միայն 2010 թվականի երաշտի պատճառով հանրապետության անտառատարածքներում բռնկվել է 49 հրդեհ, վնասվել՝ 810 հա տարածք: Մեծ ծավալի հրդեհները բռնկվել են հոկտեմբերին, նոյեմբերին, նոյնիսկ դեկտեմբերին: Դրանց հիմնական պատճառը եղել է առանց կանխարգելիչ միջոցառումների անտառներին հարող խոտհարքներն ու արոտավայրերը անփութորեն (գալիք բերքի համար) այրելը, անտառում հանգիստն անցկացնելուց հետո խարույկները չմարելը, սաստիկ շոգը և այլն:

Վերոնշյալ տարածքներում վնասվել են հիմնականում դեռահաս տնկիները, անտառի խոտածածկույթը, մասամբ էլ հաստաբուն ծառերը: Ասեմ, որ միայն վերջին 10 տարում անտառային հրդեհներից վնասվել է շուրջ 2000 հա տարածք, որից 40 տոկոսը (810 հա)՝ 2010-ին: Հրդեհները ժամանակին կանխելու նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի միջոցներով անտառտնտեսություններին կհատկացվի երկու ամենագնաց: տնտեսություններին կհատկացվեն նաև հակահրդեհային տեխնիկա, սարքավորումներ և բեռնաձիեր, կատեղծվեն նաև արագ արձագանքման խմբեր, կկառուցվեն ջրավազաններ նախատեսված հրդեհամարման համար: Հարկ է նշել, որ մեխանիզմների օգտագործման հնարավորությունները անտառտնտեսություններում սահմանափակ են լանջերի բարձր թեքությունների, վերականգնման ենթակա տարածքների ցրվածության և շատ հաճախ ճանապարհային ցանցի բացակայության պատճառներով [4]:

Հրդեհների ժամանակ վնասում կամ ամբողջությամբ ոչնչանում են աճող անտառը, մատղաշ շիվերը, խոտաբույսերը, սերմերը[20]:

Հարկ է նշել, որ անտառային թաղիքը ունի հողառաջացման կարևոր նշանակություն:

Նրա նզոնությունը պայմանավորված է ծառուտի կազմով, ձևով, հասակով, հողի ջրային ռեժիմով և այլն: [20]

Հրդեհները ոչնչացնում են գազանների և թռչունների բները, վնասատում ոչ օգտակար միջատների բազմացմանը:

Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքը անտառածածկ սարերի տակ է՝ Լոռու մարզում: Որպեսզի «Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերությունն արդյունահանի պղինձ և մոլիբդեն, այն կառավարությունից թույլտվություն է ստացել հատել 357 հա անտառ՝ ավելի պատկերավոր՝ ՄՈՏ 650 ՀԱՏ ՄԻՋԻՆ ՉԱՓԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ԴԱՇՏ: Թեղուտի անտառի հատումը կուղեկցվի ջրային ռեսուրսների չորացմամբ և հողի էրոզիայով, ինչի արդյունքում իրականում կոչնչանա առնվազն 2 անգամ ավելի շատ անտառ: Այս անտառների փոխարեն կլինի մեծ փոս՝ լցված մեռյալ ջրով:

Սակայն այս բոլոր վնասների հետ հարկ է նշել, որ հիմնական վնասը Հայաստանի անտառածածկ տարածքներին տրվել է ապօրինի և չկարգավորված անտառահատումներ: Եթե 90-ական թթ. առաջին կեսին դրանք թելադրված էին էներգետիկ ճգնաժամով, ապա

1996-1997 թթ. այն վերածվեց կազմակերպված բիզնեսի՝ ներառելով փայտամշակման ողջ շղթան, այդ թվում՝ փայտանյութի արտահանումը: Այդ ժամանակներից նշված բիզնեսի տերերը սկսեցին զբաղվել անտառից շինափայտի (դռների, լուսամուտների եւ կահույքի պատրաստման համար), ինչպես նաև բարձրորակ կաղնու փայտանյութի (կոնյակի հնեցման նպատակով տակառներ արտադրելու համար) դուրս բերման, կաղնու և հաճարենու որակյալ փայտանյութը Թուրքիա, Եվրոպա, Իրան արտահանելու աշխատանքներով: Նմանօրինակ ծառահատումների արդյունքում բարձրարժեք կաղնու խառը և հաճարենու անտառները շատ վայրերում փոխարինվեցին դաժուտներով և ցածրորակ անտառներով: Ինչքան մեծանում էին եկամուտները, այնքան «բիզնեսը» ծավալվում էր ու դառնում ավելի կազմակերպված: ՀՀ պետտեզիստրի տվյալների՝ 2008-ին փայտի նախնական վերամշակման ոլորտում գործում էր 362 կազմակերպություն: Ձեռնարկությունների 64 % փոքր է (2-5 աշխատող), 18 %՝ միջին մեծության (5- 30 աշխատող), և միայն 4 % է խոշոր՝ 30-ից ավելի աշխատակիցներով: Փայտավերամշակման ընդհանուր ծավալի 40 % մեր վերամշակողներն օգտագործում են մանրահատակի արտադրությունում, 30 %՝ դռների, 20 %՝ կահույքի, իսկ 10 %-ով պատրաստվում են տակառներ և դագաղներ: Սակայն հարկ է նշել, որ պաշտոնական տվյալների մոտ կանգնած են չգրանցված փայտամշակման արտադրամասեր, անհատ մարդիկ, որոնք զբաղվում են անտառի հատմամբ, փայտի վերամշակմամբ և վաճառքով:

Գլուխ երրորդ

ՀՀ հյուսիս-արևելյան շրջանների հաճարենու անտառների բարելավման ուղիները, անտառվերականգնումն ու դրան նպատակաուղղված միջոցառումները:

Այսօր, որոշ հաշվարկների համաձայն, երկրագնդի ցամաքի միայն 24-25 տոկոսն է ծածկված անտառներով: Ավելին, աշխարհի ավելի քան 1,6 մլրդ մարդկանց համար անտառը ոչ միայն ապրուստի միջոց է, այլև վատելիքի աղբյուր, կենդանիների համար սննդի հայթայթման վայր, ինչպես նաև բժշկության միջոց: Մոտ 300 մլն մարդ ապրում է անտառային տարածքներում: Բնապահպանների հաշվարկներով, կեսաբազմազանության ավելի քան 80 % համար անտառները համարվում են իրենց ապրելավայրը: Սակայն տգառիների ընթացքում իր զարգացմանն զուգընթաց մարդն

սկսել է ազատվել արտաքին միջավայրի կախվածությունից և աստիճանաբար մեծացրել իր ներգործությունը բնության վրա :

Հայաստանը աշխարհի այն 70 երկրներից է, որոնց անտառածածկ տարածքը կազմում է ընդհանուր մակերեսի 10 տոկոսը, իսկ նախկին ԽՍՀՄ տարածքում ՀՀ-ն ամենասակավանտառներից է համարվում: Հայաստանի ամեն մի բնակչի 29 անգամ քիչ թթվածին է բաժին ընկնում՝ ԱՊՀ տարածաշրջանի բնակիչների հետ համեմատած: Եթե ԱՊՀ մյուս երկրներում յուրաքանչյուր մարդու բաժին է ընկնում 29,1 հա կանաչ զանգված, Հայաստանում այդ թիվը՝ 0,1 է: Այս մասին հայտարարեց «Հայաստանի անտառներ» ՀԿ նախագահ Նազելի Վարդանյանը: «Դա էլ հիմնական պատճառն է դառնում, որ Հայաստանում ավելանան շնչուղիների, սրտանոթային ու քաղցկեղածին հիվանդությունները», - փաստում է Վարդանյանը: Հայաստանն իր անտառածածկով այսօր անգամ չի հասնում 20 տոկոսի: Դրան հասնելու համար պետք է երկու անգամ ավելացնել ՀՀ անտառածածկ տարածքները, որպեսզի 50-60 տարի հետո երկիրն 20 տոկոս անտառածածկ տարածք ունենա: Սակայն հարկ է նշել, որ դա հսկայական ներդրումների հետ է կապված, քանի որ տարեկան պետք է ամենաքիչը 5000 հա ծառ տնկել [12]: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը, Իջևանի անտառային այգին (դենդրոպարկը): Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգման և միջազգային տուրիզմի ծավալման համար: Դիլիջանի արգելոցն իր կարևոր տեղն ու դերն ունի տարածաշրջանի էկոհամակարգի պահպանման և զարգացման համար: զբաղեցնում է 27995 հա տարածություն: , Դիլիջանի ազգային պարկը գտնվում է ՀՀ հյուսիսում՝ Գետիկ և Աղստև գետերի հովիտներում, պահպանության տակ են գտնվում հաճարենու և կաղնու անտառները, Ախնաբաղի պուրակը և մի քանի լճակներ, որոնց թվում՝ 1400մ բարձրության վրա գտնվող Պարզ լիճը: Այն ընդգրկում է Աղստև գետի վերին հոսանքի ավազանը՝ Հալաբի արևելյան, Միափորի հյուսիս-արևմտյան և Արեգունի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերը [22]:

Դիլիջանի արգելոցը կազմակերպվել է 1958թ-ին՝ բուսական և կենդանական աշխարհի պահպանման, հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով: Անտառներն առաջին կարգի են: Ունեն հողապաշտպան, ջրակարգավորիչ, գիտական և տնտեսական նշանակություն: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենի, կաղնի, բոխի, լորենի, հացենի, թեղի, սոճի և գիհի:

~~Գուգարքի տարածաշրջանի անտառի վերին գոտում~~ տարածված հիմնական համակեցություններն են հաճարկուտները (4290 հա): Հաճարենին լավ աճում ու զարգանում է անտառածման բարենպաստ պայմաններում, ինչպիսիք են ներկայացված հատվածները: Սակայն մարդածին բացասական գործոնի ազդեցության տակ (համատարած հատումներ) բավականին թուլացվել է հաճարենու վերաճը, քանի որ հաճարենու կոճղաշիվային վերականգնումը չունի անտառտնտեսական նշանակություն, իսկ սերմնային առանձնյակներն էլ զարգանում են ավելի դանդաղ, համեմատած մնացած տեսակների հետ և միաժամանակ շատ են տուժում բաց տարածությունների բարձր լուսավորված պայմաններում: Կարելի է ենթադրել, որ համատարած հատումներից հետո մատղաշ ինքնացանք հաճարենիները, կտրուկ լուսավորվելով հայտնվել են սթրեսային վիճակում: Հաճարենու հատումներից հետո առաջացած լուսավորված տարածքներում հաջողությամբ սկսում են զարգանալ բացի հաճարենուց, մնացած բոլոր տեսակների ինքնացանքը (համեմատաբար արագաճ տեսակները), որին նպաստում է հաճարենու ստվերացնող սաղարթի բացակայությունը:

Հաճարենու մատղաշի մեծ մասը ոչնչացել է արևային ուժեղ ճառագայթումից, իսկ մի մասն էլ պահպանվել է համեմատաբար ստվերոտ պայմաններում՝ բոխու և ենթանտառային տեսակների սաղարթի տակ [23]:

Հասունացած առողջ ծառերի հատման հետևանքով աճարկուտները համարյա թե լրիվ զրկվեցին անտառվերականգնման համար անհրաժեշտ լավագույն ժառանգական հատկություններով օժտված մայրակ ծառերի և ծառուտների հեռանկարային նմուշներից: Հասունացած առողջ ծառերի հատման հետևանքով աճարկուտները համարյա թե լրիվ զրկվեցին անտառվերականգնման համար անհրաժեշտ լավագույն ժառանգական հատկություններով օժտված մայրակ ծառերի և ծառուտների հեռանկարային նմուշներից: Հատումից հետո առաջացած նոսրուտներում բուռն կերպով զարգանում են լայնատերև

խոտաբույսերը, մորենու և մոշենու թփուտներ: Դրանք ինչպես նաև անտառային խաշամը, խոչընդոտում են հաճարենու սերմերը հողի մեջ ընկնելուն; Հաճարկուտի վերաճին խանգարում են նաև կրծողներն ու թռչուններն, անտառում ազատորեն սնվող խոզերը: Ծառերի վերաճը կասեցնում են նաև անտառակազմող մյուս ծառատեսակները, որոնք ամեն տառի առատ բերք են տալիս և աստիճանաբար փոխարինում աճարկուտներին: Տավուշի մարզի հատվածում ծառերի 60 տոկոսից ավելին հաճարենիներ են: Մաքուր հաճարկուտներ տարածված են մեծ մասամբ հյուսիսային գառիկող լանջերին՝ 1200-1700մ բարձրության վրա: Նրանցում քիչ քանակությամբ հանդիպում են բոխի, թխկի, թեղի, երբեմն՝ կարմրածառ: Ծառերն այս անտառում կաղմում են համակցված սովերախիտ սաղարթագործ, որի տակ ենթանտառը համարյա բացակայում է: Միայն անտառի բացատներում և եզրերին հանդիպում են իլենու, ցախակեռասի, թանթրվենու և այլ թփուտներ: Հաճարկուտները ճնշիչ ներգործություն են ունենում նաև խոտածածկույթի վրա, թեև առավել սովերասեր խոտաբույսեր, այնուամենայնիվ, հանդիպում են ինչպես օրինակ՝ վահանապտերներ, սնդրուկ, գետնաստղ, հինածաղիկ և այլն: Վերին անտառային գոտում 1750-ից մինչև 2100-2200մ բարձրությունները ջերմաստիճանը ցածր է, խոնավությունը մշտապես բարձր, որի հետևանքով ծառերի բնական սերմնային աճը տեղի չի ունենում վերևում. անտառը հետզհետե նոսրանում է, ի վերջո վերածվում թփուտների, նույնիսկ հաճարենու կրում է պոիրակայինբնույթ, հաստանում է խոտածածկույթը, որը բաղկացած է մարգագետնային ձևերից և բարձրախոտային տարրերից[24]

1990-2000-ական թթ., երբ Ռուսաստանի Դաշնությունից փայտանյութի ներկրումը համարյա դադարեց, Հայաստանի անտառային արդյունաբերությունը կախված էր հիմնականում երկրում ապօրինի հատվող փայտանյութից: 1990-ական թթ. երկրորդ կեսին անտառհատումները վառելափայտ ստանալու նպատակով զգալիորեն կրճատվեցին՝ կապված երկրում գազի և էլեկտրաէներգիայի մատակարարման վերականգնման հետ: Այս հանգամանքը, սակայն, չկանխեց անտառամերձ մի շարք քաղաքային և գյուղական համայնքներում անտառներից վառելափայտ դուրս բերելու հանգամանքը: Հատումները ավելի մեծ ծավալով կատարվել են բարձր հասակային դասերում, որտեղ կենտրոնացված է բարձր որակի բնափայտի հիմնական

ծավալը; Անտառպետության վերստուգիչ ժամանակաշրջանում 1988-2004 կանգում բնափայտի ընդհանուր կորուստը կազմել է մոտ 438000 [25]:

Աղետալի մասշտաբների հասած անտառահատումների էկոլոգիական հետևանքները չափազանց վտանգավոր են: Կարգավորված անտառահատումներն առանձնապես վտանգավոր են հարավահայաց դիրքադրությունների համար, որտեղ բուսածածկն առավել խոցելի է և բարձր է արոտավայրերի ծանրաբեռնվածությունը: Բնականաբար, առկա է նաև անտառի նոսրացում [4]:

Հատումներն զգալիորեն արագացնում են էրոզիոն գործընթացները, սողանքային երևույթները, որոնք իրենց հերթին նպաստում են հզոր սելավային հոսքերի առաջացմանը, հատկապես ամառային ամիսներին, երբ ձեւավորվում են բարձր ինտենսիվության հորդառատ անձրևներ:

Անտառահատումների հետևանքները ծանր են հատկապես խմելու ջրի կորստի բնագավառում; Տավուշի մարզի մի շարք գյուղերի բնակիչներ փաստում են անտառային աղբյուրների չորանալու կամ նվազելու մասին; Հաճախ այն ունենում է աղետալի հետևանքներ:

Անտառահատումների արդյունքում Խաշթառակ գյուղի Ղմշկյոլ հանդամասի աղբյուրների ջուրը անհետացել է և այնտեղ գտնվող մի քանի հեկտար խնձորի այգիները մնալով առանց ջրի չորացել են դառնալով վառելափայտ: Նույն անխնա հատումների պատճառով Տավուշի մարզի մի շարք աղբյուրներ չորացել են: Հարկ է նշել, որ այդ աղբյուրները հանդիսանում էին ակտիվ հանգստի վայրեր, ազգաբնակչությունը այստեղ գալիս էր առօրյա հոգսերից կտրվել և հանգստանալու:

Տավուշի մարզի Աչաջուր համայնքի բնակիչներն ահազանգում են, որ իրենց

համայնքի մերձակա անտառներում կատարվող ծառահատումների արդյունքում կարող են առանց խմելու ջուր մնալ:

Ներկայումս անտառների պահպանության գործում առաջնահերթ խնդիր է ոչ միայն անտառային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը, այլև անտառային զանգվածների վերականգնումն ու հարստացումը; Հիյուսիս-արևելյան շրջաններում պետք է ամրացնել ձորափերը, բարձրացնել անտառի տարածման վերին սահմանը, վերականգնել անտառների ներքին սակմանները, ընդլայնել սանիտառիզիենիկ նշանակության

տոնկարկների տարածությունները, ստեղծել անտառպուրակներ և այլն: Հիյուսիսարևելյան շրջանների անտառածածկ տարածքների ընդարձակման նպատակով կատարվում են արհեստական անտառտնկումներ՝:րանց համար անհրաժեշտ է ապահովել նպաստավոր պայմաններ, ստեղծել նոր տոնկարաններ: Հ:արկ է նշել, որ չի կարելի ընտրել նաև այնպիսի հողամասեր, որոնք վարակված են արջուկով, նեմատոդոսով, արմատային քաղցկեղով և այլ վտանգավոր վնասատուներով ու հիվանդություններով [26]:

Անտառային տոնկարանների ստեղծումը անտառտնտեսության հիմնական խնդիրներից մեկն է: Անտառային տոնկարաններում գլխավոր ծառատեսակի ընտրությունը պայմանավորված է անտառաձեցման պայմաններով: Մշակվել են անտառկառավարման պլաններ Նոյեմբերյանի, Լավվարի, Դսեղի, Գուգարքի, Զիկատարի անտառտնտեսությունների համար: [21

ՀՀ հյուսիս-արևելյան տարածաշրջանի կանաչապատման ,քաղաքների կանաչապատման գործում մեծ նշանակություն ունի Իջևանի մերձարևադարձային դենդրոպարկը: Իջևանի մերձարևադարձային ծառայգին համարվում է բազմաթիվ բարձր գեղազարդ ծառերի և թփերի, սերմերի և կտրոնների ստացման աղբյուր, էքսկուրսիաների վայր, մասնագետների ուսուցման բազա :

Իջևանի մերձարևադարձային դենդրոպարկի (ծառայգու) բույսերը յուրահատուկ են: Յուրահատուկ են այստեղ գտնվող բուսատեսակների հայրենիքը, ձեռքբերման վայրը, կենսաձևը, մայր բույսերի քանակն այգում, ցրտադիմացկունության և չորադիմացկունության, կիրառման ոլորտը: Այդտեղ ներառված են 626 ծառաթփատեսակներ:

Ծառայգին նպաստում է նաև հզոր տոնկարանային տնտեսություններ հիմնելուն,

ցածրարժեք ծառուտների վերակառուցմանը, Հայաստանի անտառների վերականգնման ընդլայնմանը, բնակավայրերի կանաչապատման նպատակով տոնկանյութերի արտադրություն կազմակերպելուն [27]:

Անտառային տարածքների պահպանման գործում մեծ է ՀՀ հյուսիս-արևելյան շրջանների անտառտնտեսությունների դերը: Նրանքիրականացնում են անտառների կառավարումը, անտառպահպանությունը, անտառպաշտպանությունը, անտառվերականգնումը, անտառպատումը, անտառգույքագրումը, անտառի

արդյունավետության բարձրացումը և արդյունավետ անտառօգտագործումը պահպանելով անտառի կենսաբազմազանության ինքնավերականգնման կարողությունը և պահպանելով անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը ներկա և ապագա սերունդների համար: Այժմ Հայաստանում անտառբուծությունը զարգացման խիստ մեծ անհրաժեշտություն ունի: Արագ կրճատվող անտառային ռեսուրսները պահանջում են մեծ ուշադրություն դարձնել անտառտնկումներին, անտառային ստրուկտուրայի պահպանմանը և զարգացմանը: Կազմակերպվող ծառատունկներին մասնակցում են ոչ միայն դպրոցական աշակերտներ, այլ նաև մի շարք հիմնարկների աշխատողներ, անտառտնտեսության աշխատակիցներ, գյուղական համայնքների բնակիչներ: Ծառատունկներին աջակցում են Լոռու և Տավուշի մարզպետարանների բնապահպանության վարչությունները:

Ամփոփում

Բնությունը մարդու համար անհամեմատ ավելի արժե, քան մարդկային աշխատանքով ստեղծված մարդկային ինչք, ցանկացած կառույց [15]:

Մարդը բնությունից շատ է վորցրել՝ նրան վերադարձնելով համարյա ոչինչ: [28]

Մարդու գործունեության հետևանքով բնությունն աստիճանաբար փոփոխվում է, որոնք ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական բնույթ: Շատ հաճախ մարդը ակամայից հսկայական վնասներ է պատճառում բնությանը՝ այդպիսով վատթարացնելով իր իսկ գոյության պայմաննորը: Դարեր շարունակ անտառը ողջ աշխարհում ինտենսիվ օգտագործվել է և օգտագործվում է: Փայտանյութի նմանօրինակ օգտագործումը առաջ է բերում փայտանյութի և փայտի պակաս, որը տարեցտարի ավելի սուր է զգացվում: [3] Հարկ է նշել, որ անտառների այն հատվածները որոնք սիրելի են և ընդունված հանգստանալու համար, այժմ վերածվում են ոչ մաքուր տարածքների: Հանգստացողները հիմնականում իրենցից հետո աղբը թողնում են անտառում: Հարկ է նշել, որ կան նյութեր, որոնք երկար ժամանակ չեն կարողանում ոչնչանալ բնության մեջ և այս դեպքում մենք գործ ունենք աղտոտված հողային, ջրային տարածքի հետ[21]

ՀՀ 331 հազար հա անտառներում այսօր աճում են 54 ընտանիքի և 118 ցեղի պատկանող 323 թփեր ու ծառատեսակներ: Դրանց մեջ գերակշռողը հաճարենին, կաղնին, բոխին, սոճին և գլխին են, որոնք, բնակլիմայական պայմանների և գոտիների բազմազանության պատճառով, անտառատարածքներում անհավասարաչափ են տեղաբաշխված: Հանրապետության անտառազանգվածները հիմնականում հյուսիսային ու հարավային շրջաններում են և գտնվում են 500-2600 մետր բարձրությունների վրա. կենտրոնական մասը գրեթե անտառազուկ է:

Հայաստանը իր փոքրիկ տարածքում ունի բուսականության զարմանալի բազմազանություն: Ռելիեֆի, հողի ու կլիմայի բազմազանության պատճառով Հայաստանի կենսոլորտը հարուստ է բույսերի և կենդանիների տեսակների բազմազանությամբ: Այստեղ հանդիպում է ավելի քան 3200 բարձրակարգ բուսատեսակ, այսինքն՝ յուրաքանչյուր 1000ք.կմ-ի վրա, միջինում՝ 107 բուսատեսակ: Հայաստանի միկոբիոտայի ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել է սնկերի մոտավորապես 4200 տեսակ և ներտեսակային տաքսոն, 143 տեսակ հողային ջրիմուռ, 290 տեսակ

քարակու: Սա շատ ավելին է, քան արևադարձային գոտում: Հայաստանի բուսական աշխարհի 120 տեսակ կարելի է հանդիպել միայն Հայաստանում: Առանձնահատուկ դեր են գրավում դեղաբույսերը: Հայաստանի անտառներում աճում են մեծ քանակությամբ օգտակար բույսեր՝ պտղատուներ, ընկուզենիներ, սնկեր; Հաճարենու անտառը ապաստան է մի շարք վայրի կենդանիների՝ խոտակերներ, գիշատիչներ, սողուններ, միջատներ, թռչունների համար, որոնք անտառի և նրա բիոզենոցենոզից դուրս ապրել չեն կարող: Միաժամանակ նրանք էլ իրենց հերթիննպաստում են անտառի պահպանմանն ու ընդարձակմանը: Անտառի արտաքին միջավայրի կապը չափազանց մեծ է և կարևոր; Թռչունները ծառից ծառ անցնելով սնվում են վնասակար միջատներով հաճարենու անտառը փրկելով ոչնչացումից: Միջատներից շատերը փոշոտում են ծաղիկները, սերմերը տեղից տեղ տեղափոխում, նպաստում նրանց տարածմանը: Թռչունների ոչնչացման դեպքում անտառները կարող են վարակվել վնասակար միջատներով և ոչնչանալ: Որոշ միջատներ հողում բներ պատրաստելով միշտ փուխը վիճակում են պահու այն, նպաստում հողի ջրաթափանցիկությանը և օդաթափանցիկությանը: Խլուրդները, աղվեսները և այլ կենդանիներ ոչնչացնում են մայիսյան բզեզների և այլ վնասակար միջատների թրթուրները: Աղվեսը օրական կարող է ոչնչացնել 30-40 մուկ և առնետ; Աշնանը անտառը տերևաթափ է լինում; Թափված տերևների հաստ շերտը պահպանում է հողը, դրանց մեջ պահպանվող կենդանիներին, ապա աստիճանաբար փտելով հողը հարստացնում են օրգանական նյութերով, սնունդ դառնում բույսերի համար; Հաճարենու անտառում բույսերի տերևները հսկայական մակերես են կազմում: Հաշված է, որ 1.0հեկտարի վրա հաճարենու տերևների ընդհանուր մակերեսը կազմում է 75հա: Ինչպես հայտնի է տերևները անընդհատ ջուր են գոլորշիացնում, բարձրացնելով շրջապատի խոնավությունը: Դրա շնորհիվ անտառում օդի խոնավությունն անտառագուրկ շրջանների համեմատությամբ միջին հաշվով 57տոկոսով բարձր է: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, հաճարնու 115 տարեկան անտառի մեկ հեկտարը ամռան ընթացքում օրեկան գոլորշիացնում է մոտ 2600լ ջուր; Ավելացնենք, որ անտառում հողի մակերեսից խոնավության գոլորշիացումը 2.5 անգամ ավելի պակաս է քան բաց տարածքներում: Դրան մեծապես նպաստում են անտառի օդի սառնությունը, քամիների բացակայությունը, խոնավությամբ հագեցած

խաշամի առկայությունը, հողածածկոցի արտակարգ փխրունությունը և այլն; Տարբեր ռեսուրսների վերականգնման արագությունը տառֆեր է: Օրինակ, որսված որոշ կենդանիների վերականգնման համար պահանջվում է մեկ կամ մի քանի տարի, հատված անտառի համար՝ ոչ պակաս քան 60 տարի, իսկ էրոզիայի հետևանքով լվացված-տարված հողի վերականգնման համար պահանջվում է մի քանի հազարամյակ: Բնական ռեսուրսների սպառման տեմպերը պետք է համապատասխանեն դրանց վերականգնման տեմպերին: Այդ համապատասխանության խախտումը անխուսափելիորեն հանգեցնում է բնական ռեսուրսների սպառմանը: Հարկ է նշել, որ ՀՀ հյուսիս-արևելյան տարածաշրջանում հաճարենու անտառների ոչնչացմամբ ոչնչանում և անհետանում են մի շարք բույսեր, որոնք կարևոր նշանակություն ունեն ՀՀ համար [16]:

Ամփոփելով իմ աշխատանքը՝ վստահաբար կարող եմ ասել, որ ՀՀ հյուսիս – արևելյան շրջանների անտառապատ տարածքների քանակը շատ արագ կրճատվում է; Այստեղ գերակշիռ ծառատեսակ համարվող հաճարենին հատվում է մեծ չափերով, որն էլ իր հերթին ազդում է տարածաշրջանի կլիմայի , հողերի էրոզիայի, տեղումների և այլ կարևոր գործոնների վրա: Հարկ է նշել, որ անտառպահպանության ծառապահպանության գործում տարվում են աշխատանքներ, փորձեր են արվում ոչ միայն պահպանել առկա ռեսուրսները, այլ նաև կատարել ծառատունկներ, անտառվերականգնողական աշխատանքներ՝ արդեն հատված անտառների շրջանում: Սակայն պետք է փաստել, որ նույնիսկ այդ աշխատանքների ֆոնի վրա ՀՀ հաճարենու անտառների պաշարները օր օրի ավելի են կրճատվում :

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971
2. Է.Ս.Հայրապետյան, „Բնության պահպանության հիմունքները,, Երևան, 1983
3. А.Гукштинов, <Природа мира, Леса>, Москва, 1985
4. Իջևանի անտառտնտեսության կառավարման պլան, Երևան, 2005
5. Справочник по лесопилению, Москва, 1980
6. Լ.Հարությունյան, „Հայաստանի դենդրոֆլորան,, գիրք 1, Երևան, 1985
7. Հայկական Սովետական հանրագիտարան Երևան, 1980 6-րդ
8. Լ.Վ.Հարությունյան „Քո շրջապատի ծառերը,, Երևան, 1983
9. www.armtown.com. [ԽՈՐՀՐԴԱՎՈՐ](http://www.armtown.com/ru/forest) ՀԱՃԱՐԵՆԻՆ.
10. antarner.net. անտառներ
11. www.hra.am. ՀՀ անտառների վիճակը, Կարինե Իոնեսյան
12. agro.am. Դիլիջանի արգելոց
13. www.gov.am. Հայաստանի անտառները
14. nationalidea.am.
15. www.findarmenia.com/arm/nature/flora
16. Տես Ռ.Մարուխյան „Էկոլոգիական դաստիարակություն,, Երևան, 2007, էջ 8
17. А.Гукштинов, <Природа мира, Леса>, Москва, 1985,
18. Ա.Հովսեփյան, „Հայաստանի էկոլոգիական իրավիճակը,, Երևան, 2007
19. Պ.Խուրշուդյան „Անտառագիտական տերմինների ռուս-հայերեն համառոտ տեղեկատու բառարան, Երևան, 2000
20. Հայաստանի բնաշխարհ, Երևան, 2006
21. Լ.Էդոյան „Բնապահպանության դասավանդման մեթոդիկայի կարգաբաղկազմության պարամունքների ձեռնարկ,, Երևան, 2010
22. Գուգարքի անտառտնտեսության անտառկառավարման պլանների ու անտառտաքսացիոն նկարագրությունների նախնական տարբերակ, Եր., 2008
23. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971

24. Հ. Սայադյան §ՀՀ անտառածածկի զարգացումը,,Երևան,1979
25. Ա.Ե/Մարգարյան,Հ.Ն.Շահինյան,Պտղաբուծություն Երևան
26. Մ.Սայադյան,,Բուսատեսակների հավաքածու,Վանաձոր,2010